



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» փետրվարի 2014 թ.

N 17-Ն/1

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ ԾԵՐ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման N 1 հավելվածի 12.2-  
րդ կետի ու «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի  
հունվարի 14-ի N 3-Ա/1 հրամանի պահանջներով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից ծեր և հաշմանդամ քաղաքացիներին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ ուղեգրման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն տեղեկատվություն ներկայացնելու կարգը» համաձայն հավելվածի:
2. Աշխատակազմի սոցիալական աջակցության, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությունների պետերին՝ սույն հրամանով հաստատված կարգին համապատասխան ապահովել սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններից և համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններից տեղեկատվության տրամադրումը նախարարությանը:
3. Սույն հրամանի կատարման համապատասխան իրավունքները վերապահել նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյանին:



Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

**ԿԱՐԳ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԾԵՐ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ  
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՈՒՂԵԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ**

1. Սույն կարգը սահմանում է ծեր և հաշմանդամ քաղաքացիներին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ ուղեգրման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) տեղեկատվություն ներկայացնելու ընթացակարգը:

2. Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները և/կամ համալիր սոցալական ծառայությունների տարածքային կենտրոնները (այսուհետ՝ կենտրոն) ծեր և հաշմանդամ քաղաքացուն խնամք տրամադրելու մասին ընդունած որոշման պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում կից գրությամբ, փոստով, էլեկտրոնային փոստով կամ առձեռն ներկայացնում են նախարարություն:

3. Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությունը կենտրոններից ստացած որոշումների պատճենները հաշվառում է, կազմում հաշվառված քաղաքացիների հանրապետական հերթացուցակ՝ ըստ փաստաթղթի ստացման ամսաթվի, կենտրոնների, խնամքի տեսակի, որը հաստատվում է աշխատակազմի ղեկավարի կողմից:

4. Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությունը տուն-ինտերնատներից ստանալով օպերատիվ տեղեկատվություն ազատ տեղերի վերաբերյալ, այդ մասին զեկուցում է նախարարության աշխատակազմի ղեկավարին: Վերջինիս հանձնարարությամբ մեկ աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է աշխատակազմի ղեկավարի գրություն, հանրապետական հերթացուցակի առաջին համարի հաճախորդի խնամքի տրամադրման վերաբերյալ որոշում կայացրած կենտրոնին

տեղեկացնելու համար, որը դիմողին ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղեգրում է համապատասխան տուն-ինտերնատ, այդ մասին գրավոր տեղեկացնելով նախարարությանը:

5. Այն դեպքում, երբ քաղաքացին տուն-ինտերնատ ընդունվելու համար բանավոր կամ գրավոր դիմում է նախարարություն, նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությունը քաղաքացու դիմումը (առկայության դեպքում) ուղարկում է համապատասխան կենտրոն, այդ մասին իրազեկելով դիմումատուին, միաժամանակ վերջինիս սպառիչ պարզաբանելով տուն-ինտերնատ ընդունվելու կարգը:

6. Մինչև սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված տարեցների և հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգի ներդրումը՝

1) կենտրոնները ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը նախարարություն են ներկայացնում տեղեկատվություն բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ (տուն-ինտերնատներ) ընդունվելու համար դիմած, ինչպես նաև տուն-ինտերնատներ ուղեգրված անձանց մասին (կից՝ Ձև N1):

2) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները (տուն-ինտերնատներ) ամիսը մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 10-ը նախարարություն են ներկայացնում հաշվետվություն բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հաճախորդների շարժի վերաբերյալ (կից՝ Ձև N2):

ՏԵՂԵԿՄԱՍԿՄՈՒԹՅՈՒՆ

ԾԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՆԴԱՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՍՈՒՑԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սոցիալական ծառայությունների \_\_\_\_\_ տարածքային կենտրոն

(անվանումը)

Հ/հ	Քաղաքացու ազգանուն, անուն, հայրանուն	հասցեն	անձնագրի սերիա, համար	Ծննդյան թիվը	Կենտրոն դիմելու ամսաթիվը	Հաշման դանձուխում խումբը	խնամքի տրամադրման վերաբերյալ Կենտրոնի որոշման համարը, ամսաթիվը	ուղեգրի համարը, ամսաթիվը	ուղեգրված հաստատության անվանումը

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ

(ստորագրություն, ազգանուն, անուն)

Կ.Տ.

(ամիս, ամսաթիվ)

(տարեթիվը և ամիսը)

Տուն-ինտերնատի անվանումը

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (տուն-ինտերնատ) հաճախորդների շարժի վերաբերյալ

Հ/հ	Հաշվեվրու ժամանակաշրջանում			Հաշվեվրու ժամանակաշրջանի վերջում	
	ընդունվել են	դուրս են գրվել	մահացել են	ընդամենը	այդ թվում կանայք
1.	Հաճախորդների թվաքանակը				
1.1	այդ թվում՝ անկողնային				
2.	հաճախորդներից հաշմանդամներ, ընդամենը				
2.1	այդ թվում 1-ին խումբ				
2.2	2-րդ խումբ				
2.3	3-րդ խումբ				
3.	Հաճախորդներն ըստ տարիքի				
3.1	մինչև 65 տարեկան				
3.2	65-90 տարեկան				
3.3	90-ից բարձր				
4.	Նախքան սպասարկվելը միայնակ բնակվողների թվաքանակը				
5.	Ժառանգ չունեցողների թվաքանակը				
6.	Անշարժ գույք ունեցողների թվաքանակը				
7.	Անուսնական գույքերի թվաքանակը				

ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻ ՏՆՕՐԵՆ

( ստորագրություն, ազգանուն, անուն)

Կ.Տ. (ամիս, ամսաթիվ)